ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- դեկտեմբերի 2021 թվականի № Ա
ք. Երևան

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի դեկտեմբերի 2-ի №436Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 2-րդ կետով «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) պարտավորեցվել է մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը ոչ բազմաբնակարան շենքերի և, տեխնիկական հնարավորության դեպքում նաև բազմաբնակարան շենքերի, ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը դուրս բերել սահմանազատման կետեր, բոլոր ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը կնքել հոլոգրաֆիկ կնիքներով, բոլոր ոչ բնակիչ բաժանորդների հաշվառման հանգույցներում ուղղել հակառակ տեղադրված ֆիլտրերը և եռակցել կամ անհնարինության դեպքում կնքել ջրամատակարարման ցանցում ոչ պատշաճ ձևով խցափակված գծերը,

բ) Հանձնաժողովի նախագահի 2021 թվականի օգոստոսի 23-ի №637-ՀՆ հրամանի համաձայն՝ Ընկերության կողմից 2021 թվականի օգոստոսի 9-ին ներկայացված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցման սակագների վերանայման (ճշգրտման) հայտի ուսումնասիրության շրջանակում Հանձնաժողովի, ջրային կոմիտեի և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացված Ծառայությունների մատուցման 2022 թվականի սակագների հաշվարկներում ներառվող փաստացի մանրածախ ջրամատակարարման ծավալների մոնիթորինգի (այսուհետ՝ Մոնիթորինգ) արդյունքում հայտնաբերվել են հաշվառքի

սարքերի սահմանազատման կետեր դուրս չբերված 655, հոլոգրաֆիկ կնիքով չկնքված հաշվառքի սարքերի՝ 46 և հակառակ տեղադրված ֆիլտրերի՝ 13 դեպք,

գ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, Որոշման 2-րդ կետով սահմանված պարտավորությունների չկատարման փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ 2021 թվականի նոյեմբերի 29-ից հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2021 թվականի նոյեմբերի 29-ի № ԳԲ/34.3-Մ2-2/4068-2021 գրությամբ,

դ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2021 թվականի դեկտեմբերի 6-ի №ՄՇ/37827 գրությամբ խնդրել է կարճել հարուցված վարչական վարույթը՝ տեղեկացնելով, որ 2021 թվականի ընթացքում Ընկերության կողմից կատարվել է որոշակի աշխատանք՝ Որոշման 2-րդ կետի պահանջները կատարելու ուղղությամբ: Սակայն, 2021 թվականին Ընկերությունը շարունակել է աշխատել նոր կորոնավիրուսային (COVID-19) հիվանդության տարածման պայմաններում, որը կանխարգելելու նպատակով Ընկերությունը աշխատանքները հնարավորինս կազմակերպել է հեռավար եղանակով, սահմանափակվել են ուղղակի շփումները բաժանորդների հետ: Բացի այդ, այդ ընթացքում Ընկերության բազմաթիվ աշխատակիցներ են հիվանդացել և, այս հանգամանքն օբյեկտիվորեն իր լուրջ ազդեցությունն է ունեցել նախատեսված աշխատանքների ծավալների ու դրանք սահմանված ժամկետներում իրագործման վրա: Պարտավորությունների բավարար մակարդակով և ամբողջ ծավալով չիրականացնելը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կորոնավիրուսային (COVID-19) հիվանդության պատճառով քննարկվող ժամանակահատվածում Ընկերության 248 աշխատակցի կորոնասիրուսային (COVID-19) հիվանդությամբ և 53 աշխատակցի մեկուսացման մեջ գտնվելով: Բնականաբար, նման քանակով աշխատակիցների չկառավարվող ժամանակավոր բացակայությունը նույնպես խոչընդոտել է ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարմանը: Ընկերությունը նշել է նաև, որ Որոշման 2-րդ կետով սահմանված աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է մեծաթիվ մարդկային ռեսուրս, ուստի սահմանազատման կետ դուրս բերման գործընթացն արագացնելու նպատակով հայտարարել է շինարարական կազմակերպությունների ընտրության մրցույթ, որի արդյունքներն ամփոփման փուլում են և եղանակային բարենպաստ պայմանների դեպքում, նախատեսված աշխատանքներն ընտրված

շինարարների կողմից կիրականացվեն սեղմ ժամկետներում: Մոնիթորինգի արդյունքում արձանագրված դեպքերի վերացման համար տրվել է կարճ ժամկետում իրականացնելու հանձնարարականներ, իսկ կատարված աշխատանքների ընթացքի մասին Հանձնաժողովը պարբերաբար կտեղեկացվի,

ե) Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված Ծառայությունների մատուցման ԼՋ№0001 լիցենզիայի (այսուհետ՝ Լիցենզիա) պայմանների 32-րդ կետի համաձայն՝ Ընկերության նկատմամբ տուժանք չի կիրառվում, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս մաժորի հետևանք են,

զ) Լիցենզիայի պայմանների 1-ին կետի 15-րդ ենթակետի համաձայն՝ ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են լիցենզավորված անձի կամքից անկախ և միևնույն ժամանակ, անկախ վերջինիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված նրա գործողություններին: Լիցենզիայի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքերն ու հանգամանքներն են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված ակտերը, վերջիններիս գործողությունները կամ անգործությունը,

է) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշման 2-րդ կետի պահանջը՝ Հանձնաժողովի կողմից արդեն 2-րդ անգամ սահմանված ժամկետում ոչ բազմաբնակարան շենքերի և, տեխնիկական հնարավորության դեպքում նաև բազմաբնակարան շենքերի, ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը ամբողջությամբ դուրս չի բերել սահմանազատման կետեր, բոլոր ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը չի կնքել հոլոգրաֆիկ կնիքներով, ոչ բնակիչ-բաժանորդների հաշվառման ոչ բոլոր հանգույցներում է ուղղել հակառակ տեղադրված ֆիլտրերը, չի եռակցել կամ անհնարինության դեպքում չի կնքել ջրամատակարարման ցանցում ոչ պատշաճ ձևով խցափակված բոլոր գծերը: Ինչ վերաբերում է Ընկերության փաստարկներին, հարկ է նշել, որ Ընկերությունը չի

հիմնավորել, որ Որոշման 2-րդ կետով սահմանված պահանջի չկատարումը հետևանք է ֆորս մաժորի: Մասնավորապես, որպեսզի հանգամանքը համարվի ֆորսմաժորային, անհրաժեշտ է, որ այն հանգեցրած լինի կոնկրետ պարտավորության չկատարման, և լիցենզավորված անձը ձեռնարկած լինի բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար, մինչդեռ Ընկերության ներկայացրած փաստարկներով նշված հանգամանքների առկայությունը չի հիմնավորվել, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Տվյալ պարագայում Որոշմամբ նշված պարտավորությունները ծագել են դեռևս 2020 թվականի հունվարի 1-ից՝ 2019 թվականի նոյեմբերի 20-ի №429Ն որոշման ուժի մեջ մտնելու պահից, ապա դրանց կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը՝ հաշվի առնելով ֆորսմաժորային հանգամանքները: Պարտավորությունների բավարար մակարդակով և ամբողջ ծավալով չիրականացնելը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կորոնավիրուսի (COVID-19) համաճարակով կրկին պայմանավորելը հիմնավորված չէ, քանի որ Որոշման ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը չեն եղել կորոնավիրուսի (COVID-19) համաճարակով պայմանավորված ոչ բնակիչ-բաժանորդների և Ընկերության գործունեության այնպիսի սահմանափակումներ, որոնք կխոչընդոտեին Ընկերության պարտավորությունների կատարմանը: Այնուամենայնիվ, Ընկերությունը, դեռևս 2020 թվականից տեղեկացված լինելով համաճարակով պայմանավորված աշխատանքների կազմակերպման հնարավոր բարդությունների մասին, չի ձեռնարկել գործուն միջոցներ դրանք ավելի վաղ վերացնելու ուղղությամբ, այդ թվում՝ շինարարների կողմից դրանք իրականացնելու նպատակով ավելի վաղ մրցույթ հայտարարելու ուղղությամբ: Վերոշարադրյալ իրավական և փաստական հիմնավորումների ուժով, Հանձնաժողովի գնահատմամբ, Ընկերության փաստարկները հիմնավորված չեն, բացակայում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածով նախատեսված վարույթի կարճման հիմքերը: Որոշմամբ պահանջի սահմանումն ի սկզբանե նպատակ է ունեցել դրականորեն

անդրադառնալու սպառողների համար Ծառայությունների մատուցման սակագների վրա՝ ոչ բնակիչ-բաժանորդների մոտ ապօրինի միացումները հնարավորինս նվազագույնի հասցնելու միջոցով նպաստելով Ծառայությունների մատուցման սակագների հաշվարկում ներառվող ջրամատակարարման ծավալների ավելացմանը, սակայն, Ընկերության կողմից դրա պատշաճ չկատարման հետևանքով չի ապահովվել համապատասխան արդյունք, իսկ Ընկերությունը, տեղեկացված լինելով պարտավորությունների կատարման հնարավոր խոչընդոտների մասին, չի ձեռնարկել բավարար միջոցներ Որոշմամբ սահմանված պահանջն արդեն երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում կատարելու համար, ուստի նշված պահանջի խախտման համար Ընկերության նկատմամբ ենթակա է կիրառման տուգանք, և

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 3-րդ կետը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշման 2-րդ կետի խախտման համար Ընկերությանը տուգանել հինգ միլիոն դրամի չափով:
2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Պարտավորեցնել Ընկերության մինչև 2022 թվականի սեպտեմբերի 1-ը՝

1) ոչ բազմաբնակարան շենքերի և, տեխնիկական հնարավորության դեպքում նաև բազմաբնակարան շենքերի, ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը դուրս բերել սահմանազատման կետեր.
2) բոլոր ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը կնքել հոլոգրաֆիկ կնիքներով.
3) բոլոր ոչ բնակիչ-բաժանորդների հաշվառման հանգույցներում ուղղել հակառակ տեղադրված ֆիլտրերը.
4) եռակցել կամ անհնարինության դեպքում կնքել ջրամատակարարման ցանցում ոչ պատշաճ ձևով խցափակված գծերը:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում և բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:
5. Սույն որոշումն սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
դեկտեմբերի 2021թ.